

ՄԱՐՏ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բայի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարոյական մահ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Նամակ Աշտարակից. Նամակ Բաթումից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շվեյցարիայից. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ՅԱԾՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազատ ժամանակ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՄԱՀ

Անդրկովկասի հայութեան համար ներկայումս եթէ կայ մի կենսաբան, որ գրաւում է ընդհանուր ուշադրութիւն, որ քաջաբան է յայտնաբերում է,—գա Բագուն է: Նաւթային մայրաքաղաքը վաղուց է գուրս եկել մի մասնաւոր քաղաքի, մի առանձին անկիւնի դիրքից. նա մի մեծութիւն է արդէն, որ իր հսկայ արդիւնաբերութեան անթիւ ձանկերով քաղում է տանում է մեր գաւառներէն բոլոր գործունէայ, վաղուց ի շատէ ընդունակ տարրերը: Նոյն իսկ Թիֆլիսը ստիպւած է գլուխ խոնարհեցնել միլիոններէ հայրենիքի առաջ. կովկասեան այս մայրաքաղաքն էլ բաւական դատարկիւ է, ուղարկելով իր ինտելիգենցիայի մեծ մասը այնտեղ, ուր չաղ ու ծրիները, հարստանալու գիւրդութիւնները աւելի քան շրջուցիչ են: Աւելացնենք այդ բոլորի վրա և այն, որ մեր ուսանող երիտասարդութեան ահագին մեծամասնութիւնը գաղութական նստարաններէն ուղարկւում է նոյնպէս Բագուն, ուր և մնում է կենսանքի մէջ:

Այսպէս ուրեմն, Արեւելեան թերակղզին այն նոր աւետեաց երկիրն է, ուր համախմբվում են մեր ժողովրդի միջից գուրս եկող բոլոր այն տարրերը, որոնք գործելու, առաջնաւոր եղանակ և ձգտում ունեն: Արեւելեան թերակղզին Անդրկովկասի հայի հայրենիքն է դառնում, պիտի կերակրէ նրան, պահպանէ և բարոյական հասակ հաղորդէ նրան:

Բայց ի՞նչ ազդեցութիւն կարող է ունենալ ոսկիների աշխարհը այդ ահագին բազմութեան վրա: Վերջին երկու տարիներում մենք ականատես ենք հրէշաւոր փոփոխութիւն: Դեռ անցեալ տարի ինտելիգենտ դասակարգը ակցիոներական կոմերցիաների միջոցով բացարձակ կողոպտում էր արհեստաւոր և առհասարակ աշխատաւոր դասակարգը, խլում էր նրա կոպէկները, որպէս զի իր համար փառահեղ կարգեր և կենսական ամեն ճիշդ յարմարութիւններ ձեռք բերէ: Այդ անբարոյականութիւնը այն աստիճան խայտառակ էր, որ մենք անցեալ տարվայ մեր առաջնորդողներին մէկում ասում էինք, թէ գալիս է ժամանակ, երբ հասարակութեան ա-

նարատ մասերը պիտի ինտելիգենցիայի դէմ նոյն կոիւր սկսեն, ինչպէս, օրինակ, ժողովրդի տրիւնը ծծող վաշխառուների դէմ...:

Շատերին շատ խիստ թւաց մեր այս միտքը: Բայց սխալմի՞նք էինք մենք: Այսօր հասարակ ժողովուրդը կողոպտող ինտելիգենցիայի արարքները արդէն կարելի է շատ անմեղ բաներ համարել, որովհետեւ նաւթային մայրաքաղաքի կենսաբար արտադրութիւնը մեր առաջ աւելի ամօթաբեր, աւելի խայտառակ իրողութիւններ: Հարկ չը կայ, որ մենք այստեղ յիշատակենք փաստեր. վերջին ժամանակներս մենք տպագրեցինք մի քանի համառօտ, բայց վերին աստիճանի պերճաւոր տեսութիւններ, որոնք ձեզ հասկացնում են թէ բարբերի որպիսի ժամանակակից Սոցիալ և ներկայացնում նաւթի ֆոնտաների հայրենիքը: Դուք, անշուշտ, էջ մոռացել այն զգուշի զոգուցիւնները, որ կատարում են ոչ միայն գործակատարները, այլ և զիպլում ունեցող ինտելիկները, ինչպէս նաև միլիոնատէր կրեանները, որոնք պէտք է որ կշառցած լինէին ոսկուց: Ձեք մոռացել նաև թէ ինչպէս մի ժամանակվայ իդէալիստները, գաղութական ուսուցիչները, տեսուչները, գրական գործիչները մինչև կոկորդ խրվել են բարոյական ցեխերի մէջ, դարձել են կոպէկների համար հոգի տուող չարիքներ, աղաներից էլ վատթիւր, սղէտ վաճառականից էլ շատ ազատ և անտրամաբան:

Ձերկարացնենք, Բագուն հրէշաւոր ակտերը մի կարճ յօդուածում չեն կարող տեղաւորվել: Մենք միայն ուզում ենք մասնացոյց անել թէ ինչ ահագին փոփոխութիւն է սպասւում մեր հայրային բարոյականութեան, թէ ինչ դանդաղ, բայց անուղղել մահ է մտնում մեր հասարակական օրգանիզմի մէջ: Գողերի, յափշտակիչների, չարիքների, սողունների դասակարգերը մինչև այժմ առանձին առանձին էին, հասարակութիւնից դատված, գոյութիւն էին պահպանում իբրև անբնական, հիւանդոտ անխուճարիկութիւն: Այժմ այդ զգուշի արատները արդէն սկսում են պատուել իրանց սահմանադէրը, կարողանում են ոտնախալ անել ամեն մի մաքուր հասկացողութիւն և դառնալ հրապարակի տէր: Դարերից ի վեր դատաւարութիւնը կեղտոքը այսօր պաշտամունքի ձև են ընդունում: Դերերը մենք ամենահեղինակաւոր, ամենագրաւի անկիւնում: Ի՞նչ է նշանակում սա: Ինչի՞ նշան է, որ այդ զգուշի պաշտամունքի թուրմերը օր օրի վրա բազմանում են, դառնում են աւելի յանդուգն, աւելի աներես, կարծես թէ երգվել են

քաղաքներ աշխարհը իրանց կեղտոտ քաղաքներութիւններով...:

Մի քանի տարի թող շարունակվի այսպէս—և հայ ժողովուրդը կարող է մնալ բարեւ ամեն բարոյական հասկացողութիւններին, այսինքն յայտարարել թէ ինքը այլ ևս ապրողների շարքում չէ: Մենք չենք չափազանցանում: Այն տեղը, ուր կատարվում են այդպիսի գործեր, բերիական Սոցիալ է, որ կարող լինէր երկնքի կրակներով ոչնչանալ ու անփնտռաբար զոհուի: Մեր իւրաքանչիւր քաղաքը, իւրաքանչիւր գիւղը ունի այնտեղ ներկայացուցիչ: Մեր ժողովրդի բոլոր երանները այնտեղ են խփում: Ի՞նչ պիտի ստորեն այնտեղից: Նրեակայում էք, թէ այնտեղից մեր հասարակութեան բոլոր խաւերում...:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Երէկ մենք հաղորդեցինք, որ ուսուցիչ Գրիգորի միջնակարգական պաշտօնական օրգանը հերքում է արտասահմանում տարածված այն լուրը, թէ ուսուցիչ կառավարութիւնը մեր տաղի է պետական միջնակարգական դարձնել նաւթային գործը: «Рѣшѣнія Вѣд.» լրագիրը այդ հերքումի առիթով գրում է, որ նաւթարդիւնաբերութեան գործը, այնու ամենայնիւ, պահանջում է կառավարութեան միջամտութիւնը: Նաւթը դարձել է խոշոր կապիտալ միջնակարգականութիւն. Բագուն նաւթային գործիչները միայն են կերտելի եւ մագնիթի գնորդ: անդադար բարձրացնելու համար եւ ահա, միջնակարգական թերակղզում ստացվող նաւթի քանակութիւնը տարեցտարի աստիճան աճում է, գնները, փոխանակ իջնելու, տարեցտարի բարձրանում են: Ռուսաստանի գործարանական շրջանները արդէն գանգատվում են, որ նաւթային միջնակարգական աստիճանի թանկանում են, եւ այդ ոչ թէ այն պատճառով, որ արդիւնաբերութիւնը անաղիւ պահանջ է առաջացրել, ինչպէս հաւատացնում են Բագուն, այլ այն պատճառով, որ գործարանատէրերը եւ արտահանողները խօսք մի են արել ու թանկացնում են նաւթային արտադրութիւնները արհեստական միջոցներով:

Նաւթարդիւնաբերութեան ներկայ գրութիւնը անբնական է: Մի երկրում, ուր նաւթային փառելիքը տարեցտարի մեծ է մեծ պահանջ է առաջացնում ոչ միայն գործարանական արդիւնաբերութեան, այլ և երկրակաշիւնների կողմից, ուր քաղաքների շահագործութիւնը չէ կարողանում բաւարարութիւն տալ եղած պահանջներին, ուր կերտելով, իբրեւ լոյսի աղբիւր, գործ է ա-

ծում ամբողջ ազգայնականութիւնը ձեռնարկ երկար գիշերների ընթացքում—այդպիսի երկրում նաւթարդիւնաբերողների մի փոքրիկ խմբի միջնակարգական տիրապետութիւնը ի վնաս ամբողջ Ռուսաստանի շահերի մի շատ լուրջ անտեսական թշուառութիւն է դառնում: Մեր առջեւ միայն օտար կապիտալների տիրապետութեան արդիւնք է, այլ առհասարակ խոշոր կապիտալի, որը, բնական միջնակարգականութեան դիրք ունենալով, կարող է դառնալ համարեա անշարժիկ, եթէ նաւթարդիւնաբերողների եւ սպառողների մէջ եղած այս անհաւասար կուլին չը միջամտէ պետական իշխանութիւնը:

Բագուն բերաւոր բանուորները, գործաւատները հեծում են կապիտալիստների ձեռքին, շարունակ դանդաղում են թէ իրանց հարստահարում են ամենամանրից՝ կերպով: Շատ ցաւով են այդ նախատեսները, կարելիցութեան եւ համակրութեան կատարելապէս արժանի են: Բայց միթէ մենք, Բագուն միջնակարգից հեռու ապրողներս, պակաս ենք հարստահարվում, մեր գրաւանք հանելով այնքան կոպէկներ, որ նաւթային թագաւորները իրանց միլիոնների վրա միլիոններ աւելացնեն ի փառս իրանց անաւոր որովայնների: Մենք, միլիոնաւոր մարդիկ, զոհեր չենք: Մեր չքնաղ հեռուորութիւնից մենք զգուշանում ենք նայում այդ նաւթարդիւնի վրա, բայց մի եւ նոյն ժամանակ ապօրէն հարկ ենք տալիս նրանց. մեր հլու հպատակութիւնը ստեղծում է Բագունի կրեանների համար լիաւատարմութեան այն մըլընտրվող, որի մէջ այլ եւս չէ մնացել բարոյական ոչ մի հասկացողութիւն, մարդկային ոչ մի ուղիղ, չաղճատված դէմք...:

Գրական ծարաւը ընդհանուր է բոլոր հայերի մէջ: «Ի՞նչ կարգանք», հարցնում են ձեզ ամեն օր, եւ դուք մնում էք շուարած. դուք գիտէք, որ մի ջանաւոր ընթերցող կարող է մի քանի ամիսների ընթացքում կարգաւ, վերջացնել հայերէն նոր գրականութեան ոչ միայն վտիտ տետրակները, այլ և հաստատիոր հատրիները: Հենք արդէն կարգացված են մի քանի անգամ, իսկ նորերը չը կան. ինչ պատասխան տուք հարցնողներին: Ահա համալեւտեան մի հարց: «Ի՞նչ կարգանք»—այս հարցը ուղարկել է Չմիւնիստից մի հայ Կ. Պոլսի «Բերական» շաբաթաթերթին:

Իրաւ որ անձրեւած կը մնանք, այս հարցումն գոհացուցիչ պատասխան մը տալու: Տարիներէ ի վեր չենք հանդիպած մեր գրական հրապարակին վրա երկի մը, որուն ընթերցումը պարզեւէ մեր հոգիին այն հմայքն ու հրապարակ գոր կընծայէին մեր պատանեկութեան օրերուն ընթերցումները: Հիմա, մենք հմայքաւոր եղած ենք մեր կարգալուծէն համ չառնելու աստիճան, թէ իրօք սիրտ ու հոգի պարապող, զբօսցնելով կըլծող արտադրողներ չը կան: Ժամանակի, բարքի, խորթացած ճաշակի խնդիր՝ թէ գրական ամբողջութիւն: Մեր կարծիքով, վերջին մասնութեան դիւերը Յիսուսի կրած փիղիքական եւ բարոյական անմիջանք. եւ եթէ Աստուած ալողի այդ ամենից որ եւ է մի բան գուրս գայ, ալ կը լինի մեր արժանապատիւ հօր քարոզի թույլ ստուերը:

Դուք կը լսէիք եւ կը տեսնէիք այստեղ—եւ «հոգեբանական խնդիրների չօյալիւմն» եւ տաղանակի ճիշդութիւն, եւ մարդկայնութեան զրծեր», եւ «որկրամոլական թախիծ» եւ չը դիտեմ քանի քանի տեսող անխմանալի, անհասանելի սիրտըրդներ...:

Այդ աստիճան դատարկ ողբերգութիւն, ինքնամոռացութիւն: Բայ ինչ՞ չէք դուք: Յետոյ ասում են ջիւրը «Թուլացան» մաղկերը ընթերցել ժամանակ թափվում են...:

Հապա ի՞նչ էիք սպասում. եւ ով է մեղաւոր...:

Միւսն էլ մեր ճիւղած—գուրս եկած», հարկուր տարվայ փորձված տէրտէքն է: Դուք էլ նրան կը ճանաչէք, եթէ չեմ սխալվում:

Սա էլ իր քարոզի համար վերցրել էր մի շատ հետաքրքրական նիւթ՝ «Մայրեր եւ դայի ակն եր»:

Այն, այդ, մայրեր եւ դայիակներ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա Ջ Ա Տ Ժ Ա Մ Ե Ր

Մեր Բարոյակները

Տարակոյս չը կայ, որ կենդանի խօսքը զօրեղ է, նրա ներգործութիւնը խոր, տպաւորութիւնը երկարատեւ:

Ուրիշ է կարգաւ աւետարանը. բոլորովին ուրիշ բան կը լինէր, եթէ մենք այդ մի եւ նոյն աւետարանը լսած լինէինք Յիսուսի բերանից:

Կենդանի խօսք լսելու համար ժողովուրդը յաճախում է եկեղեցի, որտեղ ամեն օր դուք կարդում էք սուրբ գրքերից քարոզներ եւ խրատներ: Բայց այդ քարոզները չեն ազդում նրա սրտի վրա, անմեղ չեն տալիս նրա ուղիղն եւ անցնում են ապարդիւն ինչպէս առաւանակում փող քամի...:

Պատճառ:

Պատճառը շատ պարզ է. ժողովուրդը չէ

հասկանում ձեր լեզուն—սուրբ գրքի լեզուն: Լեզուն չը հասկանալ, բայց ասածի միտքը ըմբռնել... Այդ հօ միանգամայն անկարելի է:

Դեռ հարց է, թէ իրանք ընթերցող եւ քարոզողներ հասկանում են իրանց լեզուն, ըմբռնում են թող հէնց իրանց ասածի իմաստը...:

Ինչ եւ ինչէ ժողովուրդը դարձեալ չէ վատում, չէ հեռանում ձեզանից: Նա փափագում է, նա վաղում է ձեզ մօտ իր հոգեկան ծարաւը յագեցնելու:

Օղբովում էք ձեր հօտի այդ փափուկ արամադրութիւնից:

Քաւ լցից:

Ամբողջ տարվայ ընթացքում միայն մեծ պանն է այն երջանիկ սեղօնը, երբ դուք պիտի բարեհաճէք բերան բանալ մի կամ երկու քարոզ խօսելու համար:

Ի՞նչ արած. դրանով էլ բաւականանում ենք: Ահա մեծ պանն էլ եկաւ: Արձակեցէք ձեր շրթունքները եւ խօսեցէք: Մենք շատ ենք փափագում ձեզ ականջ դնելու:

Միայն քանի որ դեռ չէք սկսել թող տըւէք, խնդրեմ, մի փոքրիկ խորհուրդ:

Խօսեցէք որքան կարելի է հանգիստ եւ

պատճառն էլ զօրաւոր ու իրական: Գրքեր ալ չեն երևիր մեր մէջ ու զգացված ծառաւոր յազգեցնելու համար, ստիպված ենք օրագրերնեղու եւ հանդէսներու էջերը պարզ տեղ, անոնց մէջ գտնելու համար՝ մեր հասկին ու ճաշակին խնդրանքը գոհացնող ներթեր, ու երաշտութիւնը, պակասը հոս ալ զգալի կըլլայ: Դուն ուրեք կը հանդիպինք էջերու, որոնք մեր աչքը իրանց վրա յառած պահին, ու մեր միտքը անուշամեղութեամբ զգեստելու հետ խօսելու, հոգին պարարելու բնութիւնն ունենան, օրվան կեանքի տաղ-տուկներէն ու յոգնութիւններէն վերջը, գեղեցիկ՝ հանգուցիկ համով հոտով ընթերցող մէջ մոռցնելու համար խոնջէնքը մըտքի ու մարմնի:

Ամայութիւնս Որոնողները շատ, բայց դժուարները—շատ քիչ, շատ աննկատելի: Մի ազգի կենսունակ հիւթերը այսպէս են քանդուած... Նոյն չաբաթաթերքը, արտասուելով պ. Ա. Ծատուրեանի «Իդէալիստ» եւ «Հրաշալի գըլ-խարիկ» ոտանաւորները, դիմում է իր գրական աշխատակիցներին հետեւեալ խօսքերով.

Քանի անգամներ ըսած ենք արդէն, ալ հերքե՛ք է, որքան կարգացնէք սէրը, կոյսը, արեւը, լուսինը, խաւարը երգելու սահման-ված տխրաւոր ոտանաւորներ, որոնցմէ եւ թէ՛ երեւնի կերեւան այս էջերուն մէջ, պատճառն այն է, որ ճշդիւ մեր նախասիր-րած ներթերուն վրա գրված ոտանաւորներ չեն խմբագրատուն հասածները, եւ մենք ա-կամայ կը հրատարակենք այդ տեսակները՝ գրական-քանաստեղծական բաժինը անտե-սած չլրջալու համար միայն: Ծատուրեանի այս նմոյշներէն կրնան ներշնչվիլ մեր աշ-խատակիցները եւ իրանք ալ սակիլ մշակել ընկերական ներթեր՝ ապրված կեանքին վե-րաբերող սիրուն ու հրահանգիչ տողեր ստեղծելու համար: Աւատ նիւթ կը մատա-կարարէ իրենց համար գործնական կեանքը, որ միայն տխուր կողմեր չունի, կայ անշուշտ նաւ զուարճալի, հրահանգիչ, բարոյալի: Դմանակները, ընտանեկանը, կրօնականը, փո-ղովրդականը, աւանդականը, պատմականը, իրաւաբանականը, եւ այլն եւ այլն: Վեր-ջապէս, ալ բաւական է որքան զգալիցանք վերացական ներթերով, փորձենք քիչ մ'ալ գրական, չափական հրահանգիչ համադրմե-րով ճոխացնել մեր գրական սեղանը:

Անցեալ տարի Պարիզում հրատարակվող մի հայերէն ամսագիր, որ անարիւն ու անհող գրականութեան ամենանեղոստ երկրպագուն է եւ մի նոյն ժամանակ ղեկավարողական ուղ-ղութեան միակ ներկայացուցիչը մեր մէջ, սաստիկ նեղանում էր ամեն անգամ, երբ «Մը-յակը» արձանագրում էւ խորտակուած էր Կ. Պոլսի հայ գրագէտների մէջ արթնացած ձգտումը դէպի բնական, դէպի իդէալական: Իր հովա-նաւորութեան տակ առնելով Կ. Պոլսի գրակա-նութիւնը, ղեկավարողական ամսագիրը հասաւ այն աստիճանի յանգեցնութեան, որ նոյն իսկ առաջարկում էր մեզ մեր խորհուրդները մեզ համար պահել ու թող տալ, որ թերթահայե-րը իրանց լուսինն ու արեւը, կոյսն ու գիշերը երգեն: Կեանքը, սակայն, մեր կողմն է եւ ղեկավարողական օրհասական աղաղակները չեն կարող խլացնել իրական ճանարտութիւնը, այն հանգամանքը, որ պոլսեցի գրողը ջանքեր է անում դուրս գալու իր երազական, անա-րիւն յափտակութիւնից եւ թաթալով կեան-քի մէջ, լուսաւորել այդ կեանքը գաղափար-ների լայնով—ինքն ըստ ինքեան շատ պերճա-խօս պատասխան է գրական լուսնոտներին...

ՆԱՄԱԿ ԱՇՏԱՐԱԿԻՑ

Փետրվարի 22-ին
Պ. Գուրբանովը հեռանալուց դէսը մեր հի-

Բայց ինչ արաւ նա այդ մայրերի եւ դա-եակների հետ: Թարսի նման օրն էլ Մաղկա-զարդ էր:

Անձ էր ինչ արաւ:

Մի քանի խօսքերով բացատրեց մանուկը հիւ-մայրական կաթով կերակրելու վնասակա-րութիւնը եւ յետոյ գնալով գնալով ընկաւ ծննդաբերութեան մանրամասն նկարագրու-թիւններին մէջ: Ընկաւ այս օրհնվածը, էլ դուրս չեկաւ...

Հայ գաղթը այսպէս է ծնվում, կովն այնպէս: Հայ ձին այսպէս է չարչարվում ծնելու ժամա-նակ, առեւծն այնպէս է գալարվում—տանջ-վում, չորս կողմից օգնութիւն կանչում:

Յետոյ՝ անասուններից անցաւ մարդուն, այ-սինքն կնոջ: Այստեղ արդէն մեր տէրաւոր ուղ-ղակի գոտաւորը դարձաւ եւ այլ եւս ոչինչ չը խնայեց, ոչ մի կէտ բաց չը թողեց...

Շարժեց, կտոր-կտոր արեց մեր սիրտը, բայց շատերին էլ հիւքեց խառնեց:

Չափահաս եւ մանկահասակ օրիորդները ալ եւս չը կարողացան դիմանալ, թերատ թողին Մաղկազարդը եւ գուրս եկան եկեղեցուց՝ ծանր,

ւանդանոցը մի կարգին բժշկի երես չէր տե-սել այս վերջին հինգ տարվայ ընթացքում: Բոլորն էլ մի տեսակ թեթեւ աչքով էին նա-յում իրանց պաշտօնի վրա եւ օր էին միմա-նում: Մինչեւ ամսի քանքը, շատ անգամ հի-ւանդներին թողնելով ֆէլզերներէ կամեին. ժողովուրդը կար եւ գիտակցում էր այդ եւ-հէնց այդ էր պատճառը, որ յաճախորդներ թիւը օր օրի վրա նուազում էր: Փառք Աս-տուծոյ, որ երիտասարդ պ. Ելիօզովի նշանակ-վելով մեզ վիճակից աշխատաւոր եւ պարտա-ճանաչ բժշկի ունենալով, ամիս եւ կէս հազիւ-լինի պարոնի գալը, բայց եւ այնպէս նա կա-րողացել է հասարակութեան մեծ մասի ան-կեղծ համակրութիւնը վաստակել: Հիւանդների ձեռքը ընդունաւորանում օրական սեղ ու դաշար չէ լինում: Այդ ինչ մեծամարդիօք է, որ կա-տարվեց այդքան կարճ ժամանակամիջոցում, որը տեղին մշակ եւ հասարակ դասակարգի մէջ մեծ հեղինակութիւն եւ համարում է ձեռք բե-րել, այնպէս անխիղճ կերպով ծծում է խեղճե-րի վերջին կօպէկը, որ շատ անգամ մշակը ստիպված է լինում հիւանդութիւնը կիսատ թողնելով հեռանալ: Մի խօսքով, այնպիսի հրէ-շաւոր բաներ են պատմում, որ մարդ միում է բոլորովին ապշած:

Լուր է պտուտ, որ Ա.—ի կնոջ դիակը մէկ գիշեր մնալով հայ-կաթօլիկների եկեղեցում, գիշերը դադարը, որը մեկնած է եղել, բացել են եւ տարել են թանգագին մատանին եւ այլ զարդեր: ասում են, որ այդ բանի մէջ հոգե-ւորականութեան մասը խառն է ընթէ լուրը ճշդիւ, մեզ էլ մնայ ցաւել այդ դասակարգի մէջ գտնվող անարժան հոգեւորականների վրա: Թիֆլիսում մեր արժանապատիւ տէրտէրները իւրացնում են եկեղեցական իրերը, եւ անոնց փաստերի դուրս գալով լրագրական ասպարէզ, միջին ճաղվում են արդարանալու համար, իսկ այստեղի հոգեւորականները ուրիշ, աւելի վա-ճելով են նոյնը կատարում: Արեւ ինչ ուզում էք, սուրբ հայրեր, մենք վաղուց համոզված ենք, որ ձեզանից լաւ բան չէ կարելի սպասել:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկրաշարժից վնասված գիւղացիներին ու-ղարկելու համար ստացանք. Սամարկան-դից՝ Բաղդասար Ղազարեանից, Յարութիւն իյարառանից եւ Կարապետ Աւագեանից 61 հատ աղբիլ-երեխաների գլխի թաշկինակներ եւ 80 հատ Սամարկանդի տեղային զանազան տեսակների տղաների գլխարկներ: Մ օ զ օ կ ի ց՝ Գէորգ քահանայ Ջալալեանից մի փոքրիկ հակ զանազան հագուստներ: Այդ բոլորը միւնք երէկ ուղարկեցինք Ախալքալաք:

Մարտի 2-ին լրացաւ ակադեմիկոս իշխան Ի. Բ. Թարխանովի գրական եւ հասարակական գործունէութեան երեսնամեակը: «С.-П. Вѣд.»-ի ասելով՝ առաւօտեան ժամը 11-ին յօրեկարի բնակարանը գնացին չնորհաւորելու պատգա-մաւորներ գիւղական-բժշկական ակադեմիայի ուսանողներին կողմից, նոյն ակադեմիայի պրո-ֆեսոր Պավլովի առաջնորդութեամբ, ներկա-յացուցիչներ բժիշկների ընկերութեան կողմից եւ ուրիշ անձինք: Յօրեկարին չնորհաւորեցին նմանապէս եւ «Սօյեանոյ Գործօրում» նրա դասախօսութիւնների ունկնդիրները: Ժամը 1-ին ակադեմիկոս Թարխանով գնաց համա-լարան իր վերջին դասախօսութիւնը կարդա-լու, ուր ուսանողների աչաղին բազմութիւնը ոգեւորված հրաժեշտ տուեց նրան: Ակադեմի-

Որպէս գի այս տեսակ բաներ ալ եւս չը պատահեն, եւ կը խնդրէի, արժանապատիւ հայ-րեր, որ դուք այդքան նեղութիւններ չը կրէիք ձեր «Ունարներ» ցուցահանդէս դուրս բերե-լու համար:

Հարկ ամենեւին չը կայ, հաւատացէ՛ք ինձ: Ուրիշ բան չենք ուզում ձեզանից: Վերցրէ՛ք աւետարանը եւ եկեղեցում ընթերցանելից այս կամ այն գլուխը կամ կողմերը թարգ-մանեցէ՛ք եւ մեզ համար հասկանալի լեզուով բացատրեցէ՛ք՝ հանգիստ, մեղմ, բոլորովին այն-պէս, ինչպէս հայրը կը գրուցէր իր որդիներանց հետ:

Դուք գիտէք, որ 40—50 տարի եկեղեցի յա-ճախած եւ ձեր եւ ձեզանից աւագները «փրո-փոսան», «ճոճոսան» քարոզները լսած ժողովուրդի մէջ երկու մարդ մի կնիկ չի ճարվի, որ կա-րողանար չնորհելով պատասխանել թէ՛կուց այն հարցին.

«Ի՞նչ բան է Մաղկազարդը»:
«Ո՞վ էր Գրիգոր Լուսաւորիչը»:
Սակայն եւ շատ էլ հակառակ—պետիմիտ չեմ, որ այդ բանը պնդեմ: Գուցէ մինը ճարվի,

կոս Թարխանով վրացի է եւ ծնվել է Թիֆլի-սում:

Թիֆլիսի փոփոխական եղանակները վերջ ի վերջոյ բերին այստեղի համար մի անսովոր երեւոյթ. մարտի 8-ին եւ 9-ին չարունակ յորդ ձիւն էր գալիս:

Ստացանք պ. Իւրի Վեկովսկու «Литера-турные очерки» աշխատութիւնը, որի մասին յայտնված էր «Մշակի» անդալ համարներից մէկում: Դա 592 մեծադիր երեսներից բաղկա-ցած մի մեծ ժողովածու է, որի մէջ մտել են երիտասարդ հեղինակի զանազան ժամանակներ սպառնած յօդուածները, որոնք վերաբերվում են ընդհանուր գրականութեան: Խնդդէս հաղոր-դել էինք, այդ ժողովածուի մէջ պ. Վեկովսկի մի քանի յօդուածներ էլ նուիրել է հայոց դրա-կանութեան: Գիրքը սոված է մաքուր եւ ար-ժէ 2 ռուբլի:

Մօսկվայի պ. Մինաս Ծորչորեան «Մշակի» ներկայ տարվայ մի օրինակը նուիրեց Եկատե-րինօպոլի հայոց դպրոցին:

Թիֆլիսում ապրող պարսիկները չորեքշաբ-թի մարտի 8-ին, կատարեցին նօրուզ-բայրաւ մի տօնը: Այս առիթով պարսկապատանները խումբ-խումբ հաւաքված՝ դրօշակներով եւ երաժշտութեամբ, գնացին դէպի պարսից հիւ պատասարան՝ հիւպատոսին տօնը շնորհաւորելու: Բոլորը գալով փողով՝ ընդունեց շնորհաւո-րութիւնները եւ հրաւիրեց մի քանիսին տուն, որտեղ նրանց առաջարկվեցին քաղցրեղէններ, սուրճ եւ չերբէթ:

Մեզ ուղարկված է տպագրելու հետեւեալը. «Դերասանուհի օր. Ուրիշարեանի ղեկավարու-թեամբ կազմակերպվում է մի դերասանական խումբ, որի նպատակն է մի շարք ժողովրդա-կան-հանրամասնչիկ ներկայացումներ տալ երբ: Նիկիտինների ցիլի-թատրոնում: Խմբին մաս-նակցելու են Թիֆլիսի դերասաններից եւ դե-րասանուհիներից մի քանիսը, նոյնպէս եւ շատ արտիստներ: Ուրիշարի Երեւոյթ է, որ մեր դե-րասանները զգում են ժողովրդական ներկա-յացումների անհրաժեշտութիւնը: Ընդհանրա-պէս հասարակ դասակարգի մէջ դէպի թա-րօն սէր զարթեցնելու միակ միջոցը—է՛թ ի նաւ թիւնն է»:

ՍՍԱԻՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Փետրվարի 12-ին սիրողների խումբը տուեց մի ներկա-յացում հայոց ուսումնարանի դահլիճում: Խա-ղային «Կրթ-կրթ», որը, որպէս Անդրկովկա-սի կեանքից վերցրած տիպական վօղբովի շատ ծիծաղեցրեց հասարակութեանը, եւ «Գի-շերվայ սաբըր խէր է», որ շատ կենդանի ան-ցաւ, որովհետեւ Նախիջևանի բարբառի էր դարձրած, հասարակութիւնը լաւ հասկանում էր: Կարգացվեցին մի քանի ոտանաւորներ Թ. Պատկանեանից, որոնցից «Աղայի սիւրէթը» Նախիջևանի բարբառով: Տեղիս փողի տաղ-րակները մի անգամ եւս տեսան իրանց «սիւ-րէթը»: Դուր եկաւ արդեօք նրանց այդ ան-ճոռնի պատկերը, չը գիտեմ: Մուտքի կողմի մեծ աշողութիւն (210 ր. 70 կ): Շնորհիւ յաջ-գելի տիկ. Օլգա Ենիկօօփեանի եւ օր. օր. Նա-զարեանների բուժէտը շատ օգուտ տուեց: Հրապարակական շնորհակալութիւն նրանց: Շնորհակալութիւն մանաւանդ դերակատար օրիորդներ Չիլեանցին եւ Աղանսեանցին, որ

որ ինքնաբաւական կերպով պատասխանի.

Մաղկազարդը նա է, որ Յիսուս-Քրիստոս էլ ի վրա երդուաւմ գնաց:

Իսկ Գրիգոր Լուսաւորիչը մեր լուսաւորիչն էր, որին խոր վերապ գցեցին, չարչարեցին եւ հանցեցին...

Վերջապէս՝ եթէ ամբողջ մեծ պատի ընթաց-քում մեզ սովորեցնէք եւ հասկացնէք—ուրիշ բան չենք ուզում: Ենց մեր «Հայր մեր»-ը որպէսզի մենք օրեկան մի անգամ արտասա-նենք գիտակցաբար եւ ոչ իբրեւ մեղմնայ, ան-չափ շնորհակալ կը լինենք ձեզանից:

Ուրիշ է, եթէ ձեզ աշողվի մեղանից պատ-րաստել այնպիսի մարդիկ, որոնք ապրելով հանդերձ՝ իմանան եւ սրբութեամբ կատարեն իրանց պարտականութիւնները դէպի ընկեր եւ դէպի Աստուած:

Այն ժամանակ հօ երկրից մինչեւ երկնք արդէն մի ապաւով կամուրջ չինած կը լինէ՞ք ձեր հոգու համար...

Տեսնենք: Արդէն մեծ պատ է:

Սեւմացան

Հիշատակարան Կառավարութիւնը, զօրազարգացար, նորոգելու հարկադրված է հրաժարվել որ եւ է քայլից, որ համապատասխանէր հարաւաճողական հանրապետութիւնների խնդիրն: Իրերի ներկայ դրութեան ժամանակ նրան մնում է միայն արտաբերել ջանքեր թիւն յայտնել, որ շուտով երկու հակառակորդներին աջողի համաձայնութիւն կայացնել երկուսի համար եւս չհասնէր պայմաններով:

ԹԻՐԿԻՆԻ: Հեռագրական հաղորդակցութիւնը Դորքեթիտի հետ վերականգնված է: Բրիտանական ժամանակահատվածները վերադառնում են այստեղ: Յանվարին են 700 հրացաններ եւ 50,000 փամփուշտներ:

9 մարտի
ԿԱՊԵՏՈՒՊՈՆ: Պաշտօնական հեռագիրը Ուարենտոնից հաղորդում է, որ թշնամին այժմ աւելի քիչ բազմաթիւ է, բայց պահպանում է իր դիրքը գետի ափին, որին դժուարութեամբ կարող են հասնել անգլիական դաշտային թիւնը հանձնարել: Իսկ թշնամու թնդանութիւնը, ըստ երեւոյթի, հեռացրված են:

ԼՕՆԴՈՆ: Երեկոյան լրագրիներին հետագրում են Կրօնշտադտից, մարտի 5-ից, թէ այստեղի բոէրական զօրքերը քաջարի կերպով սպասում են առաջ արշավող անգլիացիներին: Կրօնքը դիմեց բուրգերներին մի կրակոտ ծառով, որով հրաւիրում է նրանց յամառ լինել ազատարար պատերազմի մէջ: Այժմ—ասում է նա—անգլիացիները այժմ իրանց ձեռքերում ունեն Բլուսֆօտէնը, այնու ամենայնիւ, հայրենիքի տղատութիւնը հաւանականօրէն վերջի վերջի կը պահպանվի: Շուտից նորոգված մի ծառ արտասանեց եւ ասաց բուրգերներին, որ նրանք չը հաւատան Բոէրտոնի պրօկլամացիային՝ զենքերը վայր դնելու մասին: Երկու ծառերը՝ բուրգերներին մէջ սաստիկ ողբերգութիւն առաջ բերին:

ԼՕՆԴՈՆ: «Standard» լրագրին Բլուսֆօտէնից հեռագրում են մարտի 7-ից, որ Տրանսվալիան 4,000 բոէրներ Կոլբերգի մօտ փորձ են անում հեռանալ սահմանի վրայով Բասուտոյանը, շատ հաւանական է, որ նրանք գերի կը տարվեն:

«Daily Mail» լրագրի թղթակիցը Բլուսֆօտէնից երէկ հասաւ Կապիտալում եւ հաղորդում է, որ երեւի դեռ երեք շաբաթ տեղի չի ունենայ զօրքերի որ եւ է շարժում, որովհետեւ բանակցութիւններ սկսվեցին:

Լօրէնցէ-Մարկէզէից «Times» լրագրին հաղորդում են, որ լուրերին նայելով, քննվում է Տրանսվալիայի Օրանջիոյ հանրապետութեան հետ միացնելու նախագիծը, այնպէս որ Կրիւզէր կը լինի նախագահ, իսկ Շուտէն—զօրքերի գլխավոր հրամանատար:

Նոյն լրագիրը հաղորդում է, որ անգլիացիները գրաւեցին Բուկալիլ եւ Սլիստֆիլդ: Կիթիլիլէն Անգեալ կերակի ամբողջ օրը տեղի ունէր հրացանաձգութիւն բրիտանական զօրքերի եւ բոէրների մէջ: Մուլթը հասնելուն պէս բոէրները յետ քաշվեցին դէպի Սլիստիան: Գլէնիօի մօտ բոէրների բանակից հեռագրում են «Բէյտ» գործակալութեան, որ անգլիական զինուորական վարչութեանը ուղարկեցին «Գլուսդում» անունով յայտնի պայթուցիկ փամփուշտների մի ժողովածու: Բոէրները գտել են անգլիական զինուորների մօտ նստալուծ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏԵՆՈՒՄ Է
ԲԱԳՈՒՄ Սերմացան: Որտեղ տալ Տիգրան Նազարեանին... չէ՞ք մտաբերում ժողովրդական առածը՝ «խելին խրատ» եւ բայն: Նրանցից է՞ծ ծամանակը եւ ձեր գրիչը: Խօսել այդպիսիների մասին կը նշանակէ պատիւ անել նրանց, մի բան, որին ամենեւին նրանք արժանի չեն:

ԳՐԻԳՈՐԻՕՊՈՒՄ, Մ. Աւագեանց. «Մշակ» էջերը չեն ներում տալադրել այնպիսի ահագին վէպ, որպիսին է Ջօյայի «Բեղմնաւորութիւնը»:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՆԻՍԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

ԱՄԵՆՈՐ, ԲԱԳԻ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԻԳ:
ԱՌԱՌՈՏՆԵՐԸ

Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. վերաբուժութեան, վնասական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Ձիգովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարային հ.
Զ. Բ. Բարսեղեան—11—12 ժ. կանանց և երեխանց հիւանդ.
Ա. Ն. Շալալովսկի—12—1 ժ. ախանջի, կոկորդի և քթի հ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1/2 ժ. ներքին և երեխանց հ.
ԵՐԵՎԱՆԵՐԸ
Ա. Ն. Շալալովսկի—6—7 ժ. նեարային (երեխարարութիւն), վնասական և մորթի հ.
Բ. Ա. Նախասարգեան—7 1/2—8 ժ.
Վ. Մ. Մալիխան—քիմիական և խորացուցական հետազոտութիւն.
Վ. Սար 50 կ. չարտները ձրի համալորչով (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին.
Օ. Տ. Սևակեան—տանք. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:
Հիւանդանոցի վերանորոգ.
99—150 ԲՈՇԿԱԿԻՆ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ
ԲԺ. ՄԻՍԻՅԻՆ ԳԵԴԵՎԱՆՈՎԻ
Հիւանդներին ընդունում է ամեն օր, բացի կիրակի օրերից:
Ա. Ն. Շալալովսկի
Վ. Ն. Շալալովսկի—տանքների հիւանդ. 8—10 ժ.
Գ. Մ. Մալիխան—ներքին հիւանդ. 9—10 ժ.
Կ. Մ. Մալիխան—սեռական, կոկորդի և քթի հ. ամեն օր 10 1/2—12 ժ.
Բ. Պ. Գալուստի—ներքին և երեխաների հ. ամենաօր 11—12, բացի շաբաթ օրերից:
Ա. Ն. Շալալովսկի—աչքի հ.—12—1 ժ.
Վ. Մ. Մալիխան—վերաբուժական հ. 12—1 ժ. և երեքշաբթի օր 3—4 ժ.
Բ. Պ. Գալուստի—վնասական, մորթի և միզասեռ. հ. 1 1/2—2 ժ.
Մ. Ա. Գեդեվանով—նեարային և երեխաների, 1—2 ժ.
ԵՐԵՎԱՆԵՐԸ
Գ. Ա. Գեդեվանով—ներքին և լիւթաների հ. (ծաղկահատութիւն) 5—6 ժ.
Բ. Ն. Պալմալով—կանանց և մանկաբուժական, 5—6 ժ.
Հիւանդանոցում գտնվում են մշտական մահճակալներ և բժշկական սենյակ խորացուցական և քիմիական հետազոտութիւնների համար:
Վարդ խորչով համար—50 կ. մնացածը պայմանով: Ներկայիս փողոց, Վօրօնցովի արձանի հանդէպ, տ. Սաղնիօվի, № 11
Հիւանդանոցի վերանորոգ.
0—34 Միխայիլ Գեդեվանով

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
որանով յայտնում, թէ մարտի 15-ին, ժամը 12-ին, նրա դիւանատան մէջ յանակիւս է աճուրդ կապարով տալու Աւստրալի քաղաքային ջրմուղի կառավարչի համար մի ասն չիւնուրիւն եւ մի այլ ասն վերանորոգութեան 5653 ռ. 16 կ. գումարի:

Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժանմունքում բոլոր լի օրերը, ժամը 9-ից մինչեւ 2-ը: 1—3

ԵԿԱՏԵՐԻՆՈՒՄ ՔԱՂԱՔՈՒՄ
Կրանայա եւ Կիրպիլայա փողոցներին անկիւնում, Կիրպիլայի տանը (եղբ. Տարասովների տան կողքին), ապրիլի 1-ից վարձու է տրվում հակերով (ОПРОМ) առեւտուր անկու համար մի խանութ, որ այժմ գտնվում է Դաւիթանցի ձեռքերին: Պայմանները մասին հարցնել նոյն տեղում, գաւթում, Ա. Վ. Վարկիլիցի: 1—5

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ
«Մ Ի Զ Ն Ո Ր Դ»
(Посредник)
Դ. Ի. ԵՆԿԵՐՄՈՎԻՉԻ
Պուշկինեան պատած, Թամաշվիլի քարավանատարային հանդէպ:

Ծախվում են տներ, հողաբաժիններ՝ գործարաններ շինելու համար, քաղաքում եւ քաղաքից դուրս՝ գաւառներում: Ամբարանային, նաւթային հողեր: Մանրամասնութիւնների համար դիմել գրասենեակ: № 2. 0—17

Լ Է Օ
ՄԵԼԻՔԻ ԱՂԶԻԿԸ
պատմական վէպ, 753 երես.
(Մնացել են սակաւթիւ օրինակներ)
Գինը 1 ՐՈՒՐԻ 30 ԿՈՊԵԿ
Դիմել Թիֆլիս, «Մշակ» խմբագրութեան: 7—11

Զգուշացէ՛ք Կեղծութիւններից
ԱՌՈՂՋԱՊԱՀԱՅԱՆ
ԲՈՐՆՈ-ՏԻՄՈՒԼԵԱՆ ՍԱՊՈՆ
Գ. Յ. Ի. Բ. Գ. Է. Ս
Ոչնչացնում է պեղանները, սեւութիւնը, դեղին բծերը, պղծիկները եւ պտուկները եւ ներգործում է աւելորդ քրտնելու դէմ: Որտեղ է արվում ձեռք բերել, որպէս առաւելատալին անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան:
ՈՍԿԻ ՄԵԴԻԱԼ 1893 թ.ի համար:
Կտորի գինը 50 կ., 1/2 կտորի 30 կ.:
Ծախվում է բոլոր ամենալաւ գեղարդական մագաղաններում եւ զեղաններում:
Գլխավոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Յ. Ի. Բ. Գ. Է. Ս մօտ Մօսկվայում: Դէպօ, Թիֆլիսում, Ալմաթիում, մօտ, գեղարդործան ասորացիների առեւտուր կովկասեան ընկերութեան մէջ, Մուրիկովի եւ Գրիշակի, պ.պ. Պոպովների եւ Արիստակովի մօտ: M. 192812 6—24

ЮРИЙ ВЕСЕЛОВСКИЙ
Литературные Очерки
Джакомо Леопарди.—Байронъ на островѣ св. Лидары.—Шиллеръ и его герои.—Гейне, какъ романистъ.—Пётръ богемы XV вѣка. Жанъ Расинъ.—Андрѣ Шенье.—Послѣдніе завѣты Додэ.—Жоржъ Роденбахъ.—Княжнѣ и его трагедіи.—Пушкинъ, какі европейскій писатель Грибѣдовъ и армяне.—М. Бешикташлянъ.—Русская поэзія второй пол вины XVIII вѣка.—Древнѣйшій періодъ исторіи армянскаго театра.—Женская доля в изображеніи армянскихъ литераторовъ.—Народъ и искусство в Западѣ и т. д.
ЦѢНА 2 РУБЛЯ.
Складъ изданія у автора: Москва, Леонтьевскій пер., 11. кв. № 17. 1 3

Հրդեհից գոյքը փոխադարձաբար սպահովեցնելու
ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի գիտութիւն ապահովագրող անդամների, թէ կանոնադրութեան 37-րդ յօդուածը համաձայն ընկերութեան գործերի գրութեան 1899 թվականի հաշիւը, գրքերի եւ վրայաթղթերի հետ միասին կարելի է տեսնել վարչական ընկարանում ժամը 12-ից մինչեւ 2-ը: (10, 14) 1—2

ՊԻՓԼԻՍԻՆԻ
ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը: Գուրը 1 եկէլ նաւ բոլորովին նոր միջոց
ՁՈՒՒ ԿԱԹԸ
Երեսին ընջուրիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուկները, տալիս է կաշուին ընջուրիւն և սպիտակութիւն: Այդ դեպքը չափաւոր են. մեծ սրտակը, արկղիկի մէջ, 2 բուրբի, փոքրը—1 ռ. 50 կ. Մախրաւում են բոլոր պարֆումերական և զեղանական խանութներում: Գլխավոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց, տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան զեղանական ապրանքների վաճառման ընկերութեան խանութում: Երեսին հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայելեան փողոց և Բազում. նաւ Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի զեղաններում: Օտարաքաղաքայինների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ սրտով: 45—100

Մի տիրացու ցանկանում է տեղ ունենալ եկեղեցին. լում. խնամում է հին եղանակներ եւ ձայնագրութիւն: Հասցէն հարցնել Մուխրանսկի փ., № 9, կոչակար Յարութիւն Յարութիւնեանից: 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
արանով յայտարարում է, թէ մարտի 20-ին, ժամը 12-ին, նրա դիւանատան մէջ նշանակված է աճուրդ կապարով տալու չորս կրպակներ, որոնք գտնվում են Բազարի փողոցում, այն քառակուսի տարածութեան վրա, որ գտնվում է Ալեքսանդրեան պողոտայի Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան 4-րդ բաժնում բոլոր լի օրերը, սկսած 9 ժամից մինչեւ 2-ը: 2—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
հողաբաժնական խորհուրդը առաջարկում է ցանկացողներին ՄԱՍԽԻ մի հողաբաժին, որը տարածութիւնը լինի 1,000—2,500 քառակուսի սաժէն եւ աւելի: Առեւտրական զարոյցի չիտութեան համար: Գրաւոր յայտարարութիւններ պէտք է առլ մինչեւ ներկայ 1900 թ. ապրիլի 1-ը եւ նրա մէջ նշանակել հողաբաժնի գինը: Յայտարարութիւններն ուղղել հողաբաժնական խորհրդին: Սերգիեւսկայա փողոց, տ. № 1. 5—13

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՆԵԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը պատիւ տալով յայտնելու անդամներին, որ կիրակի օր, մարտի 12-ին, առաւօտեան ժամը 12-ին, տեղի ունենալու վերոյիշեալ ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը: Գանձակայա, № 25 3—4

Բժշկարար Կեֆիր եւ Կուլիս
♦ Օ. ԿՕՐՕՆՍ ♦
Պոլստրված Թիֆլիսի բժշկական բաժանմունքից և արժանացած երկու մէդալների՝ երկու ցուցանակներում, բնակիչ Կեֆիր և Կուլիս պատրաստելու համար: Վարելի է ստանալ Օ. Կօրօնսի գործարանում, Լորիս-Մէլիքեան փողոց, տուն Ջուրալովի և բաժանմունքում, Միքայելեան փողոց, օֆիցներների տնտեսական ընկերութեան խանութին կից:
Ուսուցիչներին, ստանդոններին և տնտեսական ընկ., անգամներին կը լինի զիջում: Զիջում կունենան և այն չքաւորները, որոնք կը ներկայարարեն բժշկից առանձին զեղանակ: Ցանկացողներին՝ Կեֆիր և Կուլիս կարելի է տեսնել ուղարկել: 46—50

ՇԵՆԵՐԱՐԸՆ-ՑԵՆԵՐԱՐԸ ԲԻՐՈ
Իմեներ Ն. Բ. Պասսեկի
Тифлисъ, Михайловская ул. № 116.
Հասցեն հեռագրիներին համար. Тифлис—Пассеку.
ՏԵԼԵՖՈՆ № 642.
ԿԱՆԱԼԻՋԱՑՈՒ, ՎԵՆՏԻԼԵԱՑՈՒ և ՏԱՐԱՑՈՒՄԸ
ԴԵՆԵԼ, ԺՈՂՈՎԵԼ և ՍԱՐՔԵԼ
աժեն տեսակ
տիրերները, խողովակներ, մեքենաներ և ջրհաններ:
ԿԱՌՈՒՑԱՆԵԼ
ԵՐԿԱԹԷ ԿԱՄԱՐՉՆԵԼ
և տնակներ:
ՑԵՆՆԵՐԱՐ ՎԱՃԱՌՈՒՄ
(Ե. Տ. Շ.) 72—100

